



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

ՓՈՔՐԻԿ



ԽՈՄՈՒՆԱՐԵ

891.995

Դ-26


ՄԵՏՆՐԱՏ

1931

ՅԵՐԵՎԱՆ

ՀԱՅԵՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՈՂՈՐԹ



7 08

Հ. Կ. Կ.

891.995

7-26

ՓՈԳՐԻԿ ԿՈՄՄՈՆԻՍՏՐԸ

30 MAY 2011

(Պարբերիկ Կոմունիստի շեպերից)



Ի շաբաթից ավելի չե, ինչ
փոքրիկ Լուիզան չի տեսել
իր հայրիկին:
Պատահում է, վոր հալ
րիկը գիշերները բոլորովին
տուն չի գալիս, իսկ յեթե գա
լիս էլ է, ապա ախրան ուշ,
վոր Լուիզան քնած է լինում:
Փալիս է և, ինչպես մալ-

րիկն է ասում, առանց ընելու կամ հանգստանալու, կըր-
կին վերադառնում իր ընկերների մոտ:
Լուիզան հազիվ 8 տարեկան է. թրվում, ուրախ,
խաբայաշ, շշկահեր գանգուրներով մի աղջիկ, վորի խո-
պուպիկներն ողակ-ողակ իջնում են նրա վարդագույն թշերի
վրա, վորոնց հետ շատ է սիրում խաղալ հայրիկը, չեր
գործարանից տուն է դառնում յերեկոները:
Լուիզայի փոքրիկ ուղեղը չի կարողանում հասկանալ
թե ինչու հայրիկն իր սովորական աշխատանքին չե, ինչու
յերեկոները տուն չի գալիս իր ժամանակին, ինչու այժմ
նրա ձեռքին հրացան կա, մի բան, վոր առաջ յերբեք չի
տեսել ինքը վոչ հայրիկի ձեռքին, վոչ էլ իրենց տանը:
Բանն այն է, վոր միայն հայրիկը չե այդպես, այլ
նրա հետ աշխատող բոլոր ախ բանվոր ընկերները, վո-
րոնց Լուիզան ճանաչում է: Նրանք էլ են զինվոր դառել,
թեև առանց զինվորական համազգեստի:
Լուիզան չի կարողանում հասկանալ նմանապես, թի
ինչու բոլոր զպրոցները փակվել են և ինքը չի գնում սո-
վորելու: Մի անգամ նա տեսել է, վոր իր ուսուցիչներից
մեկը, մի, են բարձրահասակ, բալի, ծպտացող ու մանուկ-

1795 1007 32567

ՀԱՅԵՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԳՐԻԿ ԿՈՄՄՈՆԻՍՏՐԸ
ՀԱՅԵՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԳՐԻԿ ԿՈՄՄՈՆԻՍՏՐԸ
ՀԱՅԵՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԳՐԻԿ ԿՈՄՄՈՆԻՍՏՐԸ

ներին սիրող պարոն ժակը նույնպես հրացանը ձեռքին ման ե գալիս փողոցում, կարծես պահակ լինի...

Առաջ հրապարակներում հավաքվում էին մարդիկ, բանվորներ, կանայք, մինչև անգամ լեռեխաներ. խոսում էին, ճառեր արտասանում, վորոնցից Լուիզան համարյա բան չէր հասկանում. թափահարում էին կարմիր դրոշակներ, ցնծագին աղաղակում, ծափահարում, «կեցցե» գոչում, ուրախանում, իսկ ախ, մի շաբաթից ավելի չե, ինչ ամեն բան լուել ե. փողոցները գրեթե դատարկ են լինում, իսկ լեռեխաները տանից դուրս գալն արգելված ե: Մի խոսքով ահաբան տխուր ե, վոր Լուիզան չի կարողանում մինչև անգամ իր ընկերուհու ժակլինայի մոտ գնալ: Ժակլինան բավական հեռու յե ապրում, իսկ մայրիկը թույլ չի տալիս հեռու տեղ գնալ: «Վտանգավոր ե, — ասում ե,— կարող ե մի բան պատահել»: Իսկ թե ինչ «բան» կարող ե պատահել, Լուիզան այդ չգիտե, մայրիկը չի ասում:

«Ձեա հասկանա, դեռ փոքր ես» — ասում ե մայրիկը շուրջով նրա գանգուրները: Իսկ յերբ Լուիզան սկսեց լաց լինել, բողբոջեց, ասելով թե ինքը շատ լավ ել կհասկանա, մայրիկը նրան մի բառ միայն ասաց, վորը շատ ամուր մեխվեց Լուիզայի փոքրիկ ուղեղում: Մայրիկն ասաց, թե հեղափոխություն ե ձիշտ ե, Լուիզան լուեց, բայց իրոք վոր չհասկացավ, թե ինչ բան ե հեղափոխությունը:

— Իսկ յերբ կվերջանա այդ հեղափոփոխությունը, — հեգնելով ու շվարած հարցրեց Լուիզան, — յես շատ, շատ եմ կարոտել հայրիկին. թող վերջանա, եդ ինչ վոր ասում ես, ախ, եդ բանը, հեղափոփոխությունը... Շուտ կվերջանա...

Մայրիկը ժպտաց, շուեց, համբուրեց նրա խոսրոպեն ու կքնացրեց:

Լուիզան լեռագնների մեջ եղ, յերբ իր հայրիկը տուն վերադարձավ: Ուշ գիշեր եր, Լուիզան թեև իմացավ հայրիկի գալը, բայց բունը գլխին՝ չկարողացավ վեր կենալ: Գլուխն ահաբան ծանր եր... կարծես կապար էլին լցրել

մեջը: Պոլը, — այսպես եր Լուիզայի հոր անունը, — հրացանն զգուշութամբ դրեց անկյունում, նստեց տաբուրետին ու խնդրեց, վոր ուտելու բան տան իրեն:

Լուիզայի մայրիկը կամաց փսփսաց Պոլի ականջին.

— Մի քիչ հաց ու պանիր կա: Ինչ վոր ունեյինք, վերջանալու վրա յե. հագիվ յերկու որ բավականանա շաքարը, նույնպես ե այլուրը: Ի՞նչ ես մտածում...

Պոլը շատ տխուր եր ու մտադրադ. լուռ ծամում եր չոր հացը:

— Ի՞նչ լուր կա, — բաժակը սուրճ լցնելով հարցրեց մայրիկը, — շուտ կվերջանա այս դրությունը, թե յերկար ե տևելու...

— Բանն ախ ե, Ժաննա, — ասաց Պոլը, — վոր ամբողջ բաղադրն ե կարիքի մեջ, միայն մենք չենք: — Մեր ղեկավարները չեն համաձայնվում ձեռք տալ բուրժուաների ունեցվածքին — վո՞չ տանը, վո՞չ փողին, վո՞չ ել կալվածքներին: Թեև կոմունարները համբերութամբ տանում են ամեն մի զրկանք, քաղց, նեղություն, ե ալին: Հետո... բուրժուաներն ու զինվորականները, վորոնք փախել են (վերսալլ*), այժմ մեզ ողակի մեջ են առել ե շատ եմ կասածում, թե կոմունան զիմանա: Դրությունը շատ լուրջ ե:

— Իսկ ովքեր են վերսալլները ղեկավարներ, վորոնք ուզում են կոմունան խորտակեն:

— Գլխավորը — Տիյերն ե, բայց զինվորական հրամանատարը Գալիֆեն ե, վոր գիտես, թե ինչ գաղան ե. յեթե քաղաք մտնի, քարուքանդ կանի, ել կին ու լեռեխա չի թողնի... Բայց...

Այստեղ նա խոսքը կտրեց ու նայելով Լուիզայի կողմը, դարձավ կնոջը:

— Քնած ե... կարող ե լսել:

— Քնած ե, քնած. վոչինչ չի լսի: Խեղճ լեռեխա կարոտել ե քեզ, ախպես ե կարոտել, վոր յերեկ ամբողջ

*) Պարիզից (Ֆրանսայի մայրաքաղաքը) 20 վերսալլ հեռավորության վրա գտնվող քաղաք:

որը քո մասին եր խոսում: Գոնե մի անգամ շուտ արի,
տես, խոսիր հետը, վարկայի...

Պոլն ախուհետև սկսեց պատմել դեպքերի մասին,
նրանց վտանգավոր լինելու մասին, և ելի շատ ու շատ
բաներ:

Լուիզան, վոր արդեն զարթնել էր, բայց անկողնում
անշարժ լսում էր, աչքերն ել բան չէր հասկանում. միայն
լերեք անուն նրա փոքրիկ գլխում շարունակ խառնվում
եյին իրար. Վերսալլ, Տիլեր, Գալիֆե...

Նա լսել էր Վերսալլի մասին, բայց թե ովքեր եյին
այդ Տիլերն ու Գալիֆեն, վորոնք այդքան վատ մարդիկ
եյին, և վորոնցից հայրիկը վախենում էր, թե կարող են
հանկարծ քաղաք մտնեն ու լերեխաներին... ի՞նչ հայրի-
կը կանգ առավ... ի՞նչ կանեն լերեխաներին... կծեծեն,
շատ խիստ կծեծեն... վճռեց Լուիզան իր մեջ, վորի սիրտն
սկսեց ուժգին բարախել...

— Ի՞նչ վատն են դրանք... ճշաց Լուիզան անսպա-
սելի կերպով թե իր և թե ծնողների համար:

Ծնողներն անմիջապես վեր թռան ու մոտեցան Լու-
իզայի անկողնին: Լուիզան քիչ մնաց լաց լինեք, բայց
զսպելով իրեն, հայրիկի վզովը փաթաթվեց ու սկսեց համ-
բռնել նրան:

Ի՞նչքան գունատվել է հայրիկը... նրա լերեսն ամ-
բողջովին ծածկվել է մազերով:

— Ի՞նչ պատահեց քեզ, բայիկս,— համբուրելով Լու-
իզայի խելոք աչքերն ու գանգուրները, հարցրեց հայրիկը:

— Վոչինչ,— շփոթված պատասխանեց Լուիզան,— Ա՛յ,
են... են... Գալիֆեն... Գալիֆեն...

— Ուրեմն արթնան եյիր, լսեցի՞ր ինչ վոր խոսում ե-
լինք...— թեթև դժգոհությամբ հարցրեց հայրիկը:

— Այո, հայրիկ ջան, լսեցի, ամեն բան լսեցի... Ա՛յ,
յես կգամ քեզ հետ, կգամ են չար ու վատ Գալիֆելի
մոտ, կկովեմ հետը, վոր քեզ չչարչարի... վոր լերեկոնե-
րը շուտ տուն գաս...

* *

Լուսադեմ եր:

Լուիզան այլևս չքնեց, Նա հաղնվեց, հայրիկի գոգում
նստած սուրճ խմեց, իսկ լերը հայրիկը վեր կացավ, թե
ընկերների մոտ դնա, դիրքերը, Լուիզան ել պոկ չեկավ
նրանից:

Ծնողների վոչ մի խնդիր կամ հորդորանք ոգուտ չա-
բավ: Ինչքան ել բացատրեցին, թե վտանգավոր է, չի
կարելի, չկարողացան համոզել փոքրիկ Լուիզային, վորն
արդեն արտասովոր էր մի անկուն քաշված և սպառ-
նում, վոր լերեք հայրիկն իրեն չտանի հետը, ինքը մենակ
կփախչի տանից ու կգնա:

— Կավ,— ասաց հայրիկը,— կտանեմ, միայն իսկույն
պետք է վերադառնաս տուն:

Ապա դարձավ կնոջը, հանգստացրեց, ասելով.

— Վոչինչ. այսուր կարելի լի, դեռ մեծ վտանգ չի
սպառնում. թող գա, յես իսկույն լես կուղարկեմ...

Ու մայրիկի հետ համբուրվելով, փոքրիկ Լուիզան դուրս
յեկավ տանից հայրիկի ձեռքը պինդ բռնած:

Գարնան սրբազ ու տաք առավոտ էր բացվում. Քա-
մին մեղմորեն շոյում էր Լուիզայի խոպուպիկները ու զը-
վարթ դեմքը: Փողոցները դատարկ ելին. հատ ու կենտ
մարդիկ եյին միայն հանդիպում, վորոնք հրացաններն ու-
սին շտապում եյին այս ու այն կողմ:

Պատահեց հայրիկի ընկերներից մեկը — «ընկեր Ժա-
նը», ինչպես կանչում եյին նրան ամենքը: Սա-թուխ դեմ-
քով, միջահասակ, արագ շարժումներով ու ծիծաղկոտ աչ-
քերով մարդ էր. սիրում էր լերեխաներին նստեցնել իր
ուսերին ու վազվզել: Հենց վոր Լուիզային տեսավ, ան-
միջապես մոտ վազեց, շոյեց նրա կարմրած թշերը և բար-
ձրացրեց, դրեց ուսին:

— Սրան ուր ես տանում, — դարձավ ընկեր Ժանը
Լուիզայի հայրիկին

— Ուղում ե անպատճառ Գալիֆեյին տեսնի,— ժլպ-



տալով պատասխանեց Պոլը — ինչքան արի, չկարողացա համոզեմ, վոր մնա տանը:

— Սե մահը տեսնի Գալիֆիլին: — պատասխանեց ընկեր ժանը, — մենք նրան ցույց կտանք, թե ինչ են նշանակում մեր դեմ կռիվը...

Ու սկսեցին խոսել զանազան հարցերի մասին:

Փոքրիկ Լուիզան, վոր ընկեր ժանի ուսերին նստած նայում էր քաղաքի տներին ու փակված լուսամուտներին, զարմացավ, լերբ նկատեց, թե ինչպես քաղաքի ծալած մասերի փողոցները լիքն էին զանազան տնային և այլ իրերով, վորոնք իրար վրա դարսել, մի տեսակ պատ էին շինել: Ե՛լ տականներ, ել սեղաններ, լերկաթե ու թիթեղյա հին վառարաններ, գերաններ, քարեր, լերկաթյա

ձողեր, մեծ ու փոքր պատուհաններ, տաքուրեսներ, տիթոններ... Մի խոսքով ամեն տեսակի իրեր, վորոնք արգելում էին փողոցների անց ու զարծր:

— Վոչինչ, բավական ամուր բաւերկաղներ են շինված, — զոհունակութամբ ասաց ընկեր ժանը, քաղաքը հեշտությամբ չենք տա, թեկուզ ամենքս ել այս բարրիկադների տակ մնանք: Հաստատ ու վճռական ձայնով պնդեց նա:

Լուիզան չէր հասկանում այս ամենի իմաստը, բայց ուրախ էր, վոր նոր բաներ էր իմանում ու տեսնում: Կպտումի մայրիկին, հենց վոր տուն վերադառնա:

— Լսիր, Պոլ, — հանկարծ կանգ առավ ընկեր ժանը, դառնալով Լուիզայի հայրիկին, ուսերից ցած առնելով Լուիզային: — Լսիր, տես ինչ եմ ասում...

Ու Պոլի թեից քաշելով՝ յերկտով անցան պատի կողմը: Լուիզան նայում էր բաւերկաղներին, ինչպես ընկեր ժանն էր ասում, իսկ հայրիկն ու ընկեր ժանը ինչ-վոր լուրջ դեմքով, ցածր ձայներով խոսում էին միմիանց հետ, վերից Լուիզան վոչ մի բան չլսեց:

— Վճոված բան ե, — բացականչեց հանկարծ ընկեր ժանը. ապա մոտեցավ Լուիզային, բարձրացրեց, կրկին ուսերին դրեց ու բացականչեց.

— Պոլ, շտապիր:

Վազում է ընկեր ժանը, վոնց է վազում... ձիու պես. իսկ Լուիզան կշկշալով ծիծաղում է ու ձեռքով նշան անում հայրիկին, վոր իրենց յեռեից հասնի: Հայրիկի դեմքը շատ տխուր թվաց Լուիզային: Ինչո՞ւ... մտածում է Լուիզան...

Քաղաքից դուրս լեկան:

— Դե, փոքրիկ կոմունարս, — ասաց ընկեր ժանը և ուսերից ցած առավ Լուիզային:

— Բավական է, ինչքան ձիով զբոսնեցիր, այժմ ել քիչ վոտով գնա: Ո՛... ինչ մեծ գործ ես կատարելու, գիտես... շատ, շատ մեծ գործ...

Լուիզայի հայրիկը, վոր քիչ լիս էր մնացել, հասավ նրանց:

— Պոլ, թուղթ ունես, — հարցրեց ընկեր ժանը:

— Ունեմ, — տխուր ձայնով պատասխանեց հայրիկը, ծոցի գրպանից հանեց մի ծալմըլած թղթի կտոր ու տվեց ընկեր ժանին:

Ընկեր ժանը մատիար հանեց, կուցավ, ծունկը «սեղան» շինելով ինչ-վոր բան գրեց, ապա չորս տակ ծալեց ու դարձավ Լուիզային:

— Դե, փոքրիկ կոմմունարս, հանիր աջ վստիգ կոշիկը:

Լուիզան հանեց կոշիկը: Ընկեր ժանը ծալած թուղթը դրեց կոշիկի մեջ, վորից հետո Լուիզան նորից հագավ կոշիկը:

— Պատրաստ ե. — ուրախ բացականչեց ընկեր ժանը և լուրջ դեմքով, ինչպես մեծերի հետ են խոսում, դարձավ Լուիզային. — Այսպես, փոքրիկ կոմմունարս, դու այսոր պեսը ե մի շատ մեծ գործ կատարես, շատ մեծ գործ... դու, իհարկե, ճանաչում ես քո ընկերուհի փոքրիկ Ժակ-Լինայի հորը — ընկեր Եդմոնին...

Լուիզան գլխով նշան արավ, թե ճանաչում ե և ապա.

— Այո, նա ինձ համար իմ ծննդյան տոնի որր մի մեծ գիրք բերեց, վորտեղ շատ նկարներ կան. աղվես... աքաղաղ... փիղ...

— Այո, հենց նա, — շարունակեց ընկեր ժանը. Լուիկեր Եդմոնը և մի խումբ ուրիշ ընկերներ պահում են այն ներկայացող բլուրից քիչ այն կողմը: Այս փոքրիկ ճոռաղարհով կվաղես. հենց վոր հասնես բլուրին, կծովես գիպի ձախ և ուղիղ առաջ կգնաս. այնքան կգնաս, վոր առաջդ կգա մի ուրիշ բլուր. կբարձրանաս այդ բլրի գագաթը և ցածր ցայնով կկանչես — «Պոլ, Պոլ, հայրիկ», իրր թե հայրիկին ե մնառում: Թեզ կտեսնեն զինված մարդիկ ու կոռնեն: Չվախենաս. դրանք մեր ընկերներն են: Կհարցնես. թե վորտեղ ե ընկեր Եդմոնը, և լերք քեզ նրա մոտ տանեն, կհանես կոշիկդ և այս թուղթը կհանձնես նրան: Հասկացար...



— Հասկացա. — ուրախ պատասխանեց Լուիզան:

— Դե, կրկնիր, ինչ վոր ասացի քեզ: Լուիզան մի առ մի կրկնեց ասխար:

— Այդպես, բալիկս, — շուրջ Լուիզայի գլուխը ընկեր ժանը և ավելացրեց, — տես, վոչ վոքի չտաս այդ թուղթը, վոչ վոքի. բացի ընկեր Եդմոնից, իմացար. վոչ վոքի, ով ել վոր լինի: Սա շատ մեծ գաղտնիք ե. ով ել վոր հարցնի, թե ուր ես գնում. կամ ում ես փրնառում, կասես, թե հայրիկիս մոտն եմ գնում և ուրիշ վոչինչ: Նամակի մասին վոչ մի բան չասես. հետո ընկեր Եդմոնը քեզ նույնպես մի նամակ կտա. նույն ձեզով կոշիկիդ մեջ կդնես ու գնացած ճանապարհով կրկին յետ կգաս մեզ մոտ: Ընկեր Եդմոնից բերած նամակն ել կամ ինձ կտաս, կամ հայրիկիդ. ուրիշ վոչ վոքի, հասկացար, վոչ վոքի, մինչև անգամ մայրիկին ել չի կարելի տալ... Հասկացար բալիկս. այս բանը վոր գլուխ բերես, դու մի հարյուր մարդու կազատես են չար ու վատ Գալիֆելի ձեռից:

Ընկեր ժանը մի անգամ ել կրկնեց, մեկ ել ճանապարհը ցույց տվեց, նորից պատվիրեց Լուիզային իր անելիքը, ապա նա ու հայրիկը համբուրեցին Լուիզային ու ճամբու դրին ասելով.

— Շուտ գնա, շուտ ել արի, մենք այստեղ սպասում ենք քեզ:

* *

Վազում ե փոքրիկ Լուիզան լախ ու արձակ դաշտի վրայով լերիցի նման ձգված նեղ ճանապարհով. վազո մ



ե ու մաքում շարունակ կրկնում, ինչ վոր պատվիրել է ընկեր ժանը, թե ինչպես նամակը տալու յե միմիայն ժակլինայի հայրիկին, վորը Լուիզայի գլուխը կշօյի, կասի.— «Ապրես, փոքրիկ Լուիզա, վոր այլպես բաջ ես, այդքան անվախ...»

Հայրիկն ու ընկեր ժանը հետևում են նրա ամեն մի շարժումին։ Ահա նա, փոքրիկ Լուիզան, իր կարմիր գլխարկով ու վարդադուխ շորով, նոր կանաչող դաշտի միջով փեշերը քամուն տված առաջ է վազում, կարծես կապալ լինի քամու հոսանքի հետ շարժվելիս։ Ահա մոտեցավ բլրին, կարծես կանգ առավ։ Լուիզան այժմ դարձել է մի կետի չափ փոքր. արդյոք շարժվում է նա, թե ճամբան մոռացել է, կանգ առել։ Ընկեր ժանի սիրտն ուժգին բաբախում է։ Բայց ահա «կետը» շարժվեց դեպի ձախ և բոլորովին կորավ նրանց աչքից։

— Կեցցես աղջիկս, — ուրախ բացականչեց ընկեր ժանը և թոթվեց Պոլի ուսը, վոր քարացած դիտում եր դեպի հեռուն։

Պոլի աչքերը ջրակալել էին։

— Ինչ է, լաց ես լինում, — հարցրեց ընկեր ժանը, թափահարելով Պոլին։

— Չե, եսպես... յերկար նայելուց աչքերս ջրակալեցին, — հուզված պատասխանեց Պոլը։

— Փոքրիկս հերոս է, հերոս, — սիրտ տվեց ընկեր ժանը։ — Միակ յեղն այդ եր, ուրեմն վոչ մի կերպ չեմք կարող կապ ստեղծել, տեղեկություն իմանալ, յերեխային ո՞վ ուշադրություն կդարձնի. իսկ նա դործը գլուխ կբերի։ Մի տես, ինչպես եմ պարելու, հենց վոր նրա կարմիր գլխարկը յերևա բլրի բամակից դեպի մեզ դալիս...

Նրանց խոսակցությունը հանկարծ ընդհատեց հրացանի մի ձայն, վորին հաջորդեց յերկրորդը, յերրորդը...

Վեր կողմից ե... ականջները սրեցին. չիկնի Լուիզայի վրա յեն կրակում... Բայց վոչ, ձայնը մոտիկ դիրքերից է գալիս։

— Պոլ, շտապենք դիպերը, տեսնենք ինչ լուր կա,

ինչ կրակոց է. նորից յեա կգանք մեկս ու մեկս այստեղ ու կապասենք փոքրիկին, — ասաց ընկեր ժանը, և զաշելով Պոլի թևից, նրանք յերկուսով անցան դիրքերի կողմը։

Կռիվ սկսված եր։ Վերապայինները յեռանդուն կրակ ելին բացել Կոմսունան պաշտպանող դիրքերի վրա։ Կոմսունաները նույնպիսի յեռանդով պատասխանում ելին յերբ ընկեր ժանը և Պոլը մտան դիրքերը և հրամանատարին հայտնեցին իրենց ուշանալու պատճառը։

— Վատ չի, յեթե աջողվի, — մռայլ դեմքով պատասխանեց հրամանատարը, իսկ այժմ գործի անցեք. կռիվն ինչպես յերևում է վճռական է լինելու...

* *

— Պոլ, Պոլ, հայրիկ... յերկար ու ձիգ ձայն է տալիս փոքրիկ Լուիզան բլրի զագաթից, բայց վոչ մի մարդ չի պատասխանում։

Լուիզան քրտնած է. նրա թշերը վառվում են, իսկ աչքերը՝ կարծես կրակի փոքրիկ կայծեր լինեն շարժվելիս։ Նա հոգնած է, բայց չի նստում. ընկեր ժանն ասաց, վոր պետք է կանգնած կանչի. Կոշիկի միջի նամակը, վոր ճանապարհին անհանգստացնում եր նրան վազելիս ու խանդարում, այժմ ցավեցնում է վտոր. բայց չի կարելի հանել, պետք է միմիայն տալ ժակլինայի հայրիկին. իսկ ինչո՞ւ մարդ չի յերեվում... Ու նորից կանչում է Լուիզան։

— Պոլ, Պոլ, հայրիկ...

Քամին տանում է նրա ձայնը հեռու, հեռու...

— Պոլ, Պոլ, հայրիկ... Պոլ, Պոլ, հայրիկ...

— Ո՞վ ես, մոտ յեկ, աղջիկս, — մի բամբ ձայն կանչեց նրան բլրի ներքևում ընկած մի քարի տակից։

Լուիզան մոտ վազեց ու առանց սպասելու արագ-արագ, հեալով ասաց։

— Յես Պոլի աղջիկն եմ, ուզում եմ տեսնեմ ժակլինայի հայրիկին, պարոն Եղմոնին։

— Իսկ ո՞վ է քեզ այստեղ ուղարկել, — հարցրեց մարդը հետաքրքրությամբ դիտելով փոքրիկ Լուիզային։



— Հայրիկը և ընկեր ժանը, — կարուկ պատասխանեց
Լուիզան:

— Իսկ ինչու չեն ուղարկել...

— Ուղարկել են ժակլինայի հայրիկի մոտ:

— Իսկ յեթե քեզ ժակլինայի հայրիկի մոտ չտանեմ,
ինձ չե՞ս ասի, ինչ վոր նրան պետք է ասես,

— Յես նրան վոչինչ չեմ ասելու. վա՛... դուք հո
Փալիֆեն չե՞ք, վորը յերեսաներին չարչարում ե...

Մարդը ժպտաց, դրկեց Լուիզային ու համբուրելով
տարավ ժակլինայի հայրիկի մոտ:

— Պարոն Եղմոն... ուրախացած բացականչեց Լու-
իզան... Ահա այստեղ... սպասեցեք... իսկուհի...

Ու կոշիկը հանելով՝ նստակը հանձնեց:

— Փոքրիկին ծածկեցեք մի բանով, վոր չմրսի, քրո-
նած ե. ուսելու բան տվեք, սոված կլինի, — կարգադրե-
րեց ժակլինայի հայրիկը: Ապա նա սկսեց եւջի-ուշով կար-
դալ նստակը: Կարդաց մի քանի անգամ: Հետո մոտեցավ
Լուիզային, շոյեց, փափայեց, համբուրեց ու կրծքին սեղ-
մելով հաբցրեց:

— Իմ փոքրիկ կոմունար, իմ քաջ, իմ հերոս... տե-
սել ես ժակլինային...

— Ժակլինային... վոչ, չեմ տեսել. մայրիկը չի թող-
նում նրա մոտ գնամ, ասում է հեռու յե, կարող ե «մի
բան պատահի»...

Եղմոնի սիրան սկսեց ուժանորեն բաբախել. քիչ
եր մնում լաց լինի, բայց իրեն զսպեց, ավելի ամուր
սեղմելով իր կրծքին փոքրիկ Լուիզայի գլուխը:

— Տուն վոր գնաս, բալիկս, անպատճառ զնա մեզ
մոտ և ժակլինային ասա, վոր ինձ տեսել ես...

— Այո, կասեմ, լավ. — ժպտալով պատասխանեց Լու-
իզան:


Հավաքվեցին ուրիշներն ել, վորոնց Լուիզան հաճախ
տեսել եր հայրիկի հետ, բայց անունները չգիտեր: Սրանք
նույնպես բանվորներ էլին, իսկ այժմ զինվոր են դար-
ձել: Նրանք ամենքը շոյում են, փափայում Լուիզային,

չատերը համբուրում, ինչ-վոր բաներ են նվիրում նրան.
դատարկ փամփուշտներ, փոքրիկ արկղեր, գնդակներ և
ալլն:

Ինչպե՞ս ուրախ ե Լուիզան...

Իսկ հեռվում լավում և հրացանների ու թնդանոթների
վորոտը:

— Ինչպես յերևում է, սկսված է արդեն, — սուսց ժակ-
լինայի հայրիկը, — զգուշ կացեք ընկերներ, ամեն մեկն իր
դերքում. մեր տեղը դեռ չգիտեն...



Մարդիկ ցրվեցին զանազան կողմեր, մնաց միայն
ժակլինայի հայրիկը, վորը դրկելով Լուիզային տարավ
հողի տակ շինված մի խրճիթ, վերարկուն փոսեց գետնին,
Լուիզային պառկեցրեց վրան, ծածկեց սփռոցի նման մի
վերմակով ու դժուխ համբուրելով՝ ասաց.
— Մուխ ընկնելու վրա յե, բալիկս. իմ քաջ, իմ

անվախ, փոքրիկ կոմունարս. այս գիշեր մեզ մոտ հանգիստ կընես ու առավոտը վաղ կզնաս հալըխկիդ մոտ:

«Ինչ լալն է ժակլինայի հայրիկը. ինչպէս հասկացավ, վոր Լուիզան հոգնած է, քունը ափսոսում է, և թե ինչպէս ցավում է նրա աջ վոտը, վոր նամակը հարել էր ճամբին»։— ժտածեց Լուիզան ու քնեց։

Լույսը նոր եր բացվել։ Արևելքի կողմի ամպերը կարմիր ելին հագել, իսկ արևը զեռ չի չերևում, յերբ Լուիզան աչքերը բաց արավ։ Ժուլիանայի հայրիկը նստակն արդեն պատրաստել էր։ Նա ծալած թուղթն իր ձեռքով գրեց Լուիզայի վստանամանի մեջ, ինքն իր ձեռքով հագցրեց կոշիկը, թելերն ամուր կապեց, ապա կերակրեց Լուիզային պաքսիմասով ու գրկած տաքով մինչև բլուրի գագաթը։ Մի անգամ էլ չերկար համբուրեց նրան, ապա ցույց տվեց ճանապարհը և պատվիրեց։

— Նամակը կտաս միայն հայրիկիդ կամ ընկեր ժա-
նին, հասկացմար, բալիկս, ուրիշ փոշ վաքի. ժակլինային
կհամբուրես իմ փոխարենն ..

— Լավ, — ասաց Լուիզան ժպտալով, իր խելոք ու
ժիր աչքերն արագ-արագ թաքցնելով:

Լուիզան բլրից իջնելով ակտեց վազեր, նա մտածոյ
եր մայրիկի մասին, վորը յերևի չգիտեր, թե վորտեղ է
և ինչ է անում «իր փոքրիկը». իսկ նոյրիկը առն գնա-
ցած չի լինի նա լոնկեր ժանի հետ միասին, ազատում է
քաղաքի ծալլին:

Ի՞նչքան բան ե պատմելու կուգան...

Շուրջն ամեն ինչ խողաղ է, հանդիսաւ փոշ մի մարդ
չի յերեւում. մեկ-մեկ միտա՛ն ինչ-փոր ծաւեր են թռչում,
ապա հջնում, կպչում դեանին ու նորից թռչում:

«Ախ, լեթե լես ել սըանց նոան թևեր ունենալի, ու թռչելի, — մտածում ե լուիզան, — կթռչեյլ: Իսկույն նամակը կտալի ընկեր ժանին, հետո կթռչեյի դեպի սուն, կնստեի պառնգամբի սյուներից կապած վազքի թոկին և

կկանչելի մալրիկին, ան, եսպես—«ծր'տ-ծր'տ, ծր'տ-ծր'տ, մամա, յեկել եմ, տես, ի՞նչ փոքրիկ թևեր ունեմ...»: Ահա տեղից ել կթռչելի, կիջնելի ժակլինայի տան առաջի փոքրիկ ծառին ու կկանչելի — «ծր'տ-ծր'տ, ժակլինա, ծր'տ-ծր'տ, յես տեսել եմ քո հալրիկին, ծր'տ-ծր'տ, արի քեզ համբուրեմ պապայիդ տեղակ»... ժակլինան կուղի թե բռնի, իսկ յես «թը՛ռ՛ռ՛» կանեմ, կփախչեմ»:

Այսպես մտածմունքների մեջ եր Լուիզան, լերբ մին
եւ առջև ցցվեց մի կարճահասակ, կ'պիտ դեմքով մարդ:
Նա ձեռքին հրացան ուներ, իսկ քիթը ալիքան մեծ եր,
վոր Լուիզան քիչ ձնաց փոթկար:

— Կանգնիր, — գոռաց մեծ թխանի մարդը:

Լուիզան, շվարած կանգ առավ:

— Անուշնդ լի՛նչ ե, — հարցրեց մեծ գլխահին:

... **Հոգիդ:**

— Ո՞ւմ աղջիկն էս:

— ገጽ ፩

— Վերադառնալիք ես գալիս:

— ժակլինայի հալրիկի մոտից:

— Իսկ յերեկ վոր ախտեղից անցար, համ մոտ ելիր
գնում:

— ժաղկիհնայի հայրիկի մոտ:

— Իսկ ի՞նչու ելիր գնում արդ քո ժակլինսալի հայ-
բիկի մոտ:

— Հայտիկն ու ընկեր ժաման ուղարկեցին:

«Հըմ...հըմ» արավ մեծ թթանին և բռնելով Լուիզա-
յի ձեռքից, կոպտաբար քաշեց, ցավեցնելով ձեռքը և խիստ
ձայնով ասաց.

— **Գնանք:**

... Բայց ո՛ւր գնանք, — բողոքեց Լուիզան, — լես շտապում եմ. մայրիկը...

— Յեկ, ասում եմ քեզ, — գողաց կոպիտ դեմքով
մարդը, քաշեց լուիզայի թևից և համարյա քարշ տալով
տարավ:

ՀԱՅԿ-ՈՍՏՐԱ

Իր շնորհիւ Լուիզան կանգնեց խողով պէս հասարակ, խրխռացող ձայնով մի մարդու առաջ: Լուիզային տանող մեծ քթանին, աջ ձեռքը բարձրացնելով ճակատի մոտ, ասաց.

— Պարոն հրամանատար, սա այն աղջիկն է, վորի մասին ձեզ յերեկ հայտնեցի:

Ապա պատմեց Լուիզայի ասածները, թե ով է, վոր տեղից է գալիս, և ովքեր են ուղարկել նրան:

Լուիզան շշմած կանգնել ու չի՛ր հասկանում, թե ուր է ընկել և ովքեր են իրեն հարց ու փորձ անողները: Նրա փորձիկ ուղեղում հազար ու մի մտքեր ելին խառնվում: Լուիզան վախով նայում էր խոզի նման մարդուն և մտածում, թե մի գուցե նա հենց ինքը — Գալիֆեն է, վորը չերեխաներին ծեծում է:

— Լավ, գնա, — ասաց խոզի նման մարդը Լուիզային բերողին:

Մեծ քթանին գնաց:

— Ասա անունդ, հորդ անունը և ազգանունդ, — դուրսը կախ, խրխռալով ասաց խոզի նման մարդը:

— Լուիզա, Պոլի աղջիկը, ազգանունս — Կրամեր:

— Ժակլինայի հոր անունը:

— Պարոն Եղմոն. ազգանունը չգիտեմ:

— Կարող ես ցույց տալ, թե վորտեղ է այդ քո Ժակլինայի հայրիկ՝ պարոն Եղմոնը:

— Վոչ:

— Ի՞նչպես թե՛ վոչ. — գոռաց խոզի նման մարդը, աչքերը չռեց Լուիզայի վրա: — Տեսնում ես այս մարակը, այնքան կծեծեմ, վոր կաշիդ կպլոկվի:

— Դու Գալիֆեն ես... լացակուսած հարցրեց Լուիզան:

Խոզի նման մարդը այս հարցից շշմած, մի րոպե սառած մնաց, ապա կատաղած, գլխարկը շարժելով, դարձավ մոտը նստած մի ուրիշ մարդու, վոր լուռ գրում էր Լուիզայի ասածները:

— Տեսնում ես այս լակոսին...

— Յես քեզ հարցնում եմ. կարող ես ցույց տալ պարոն Եղմոնի տեղը, — բորբոքված հարց տվեց կրկին խոզի պէս մարդը:

— Ասացի՛ վոչ. չեմ կարող... ճանապարհը չգիտեմ... դողդոջուն ձայնով պատասխանեց Լուիզան:

— Հապա ի՞նչպես գնացիր նրա մոտ:

— Քաղաքի ծայրից ինձ հայրիկը և ընկեր ժանն ուղարկեցին. ճանապարհը նրանք ցույց տվին. իսկ հիմի վերադառնալիս, ինձ ճանապարհից բերին այս կողմը...

— Իսկ յեթե քեզ տանենք այնտեղ, վորտեղից քեզ բերին, կարող ես տեղը գտնել...

— Չգիտեմ: Բայց յեթե ինձ տանեք հայրիկիս կամ ընկեր ժաննի մոտ, այնտեղից կարող եմ նորից գնամ, այստեղից՝ չգիտեմ...

— Իսկ Եղմոնը մենակ է, թե ուրիշ մարդիկ ել կան հետը:

— Ուրիշ մարդիկ կան. շատ... հարյուր... հազար... շատ... շատ...

— Հրացան ունեն:

— Այո, շատ...

— Պարոն Եղմոնը քեզ վոչինչ չի պատվիրել, վոր հայրիկիդ ասես:

— Վոչ. նա միայն խնդրեց, վոր տուն դառնամ թե չե, գնամ Ժակլինայի մոտ, հայտնեմ, վոր նրա հայրիկին տեսել եմ և համբուրեմ. ուրիշ վոչինչ չի ասել:

Խոզի նման մարդն ինչ-վոր բան մըթմըթաց մոտը նստածի ականջին, ապա բարձր ձայնով կանչեց.

— Ո՞վ կա այդտեղ:

Ներս լեկավ մի պինվոր:

— Կվերցնես հետդ յերկու հոգի ես: Յերեքով կտանեք այս աղջկանը ելի նույն տեղը, վորտեղից բերել են և կստիպեք, վոր ցույց տա Եղմոնի տեղը. հակառակ դեպքում... մնացածը ինքներդ գիտեք, — ասաց խոզի նրման մարդը:

— Լսում եմ, ձերդ մեծութուն, — պատասխանեց

զինվորը և Լուիզայի թևից բռնելով՝ դուրս տարավ:

— Զինվորը, մեծ քթանին, վոր բռնել եր Լուիզային և մեկ ել մի ուրիշը, վորի մազերը քիչ ճերմակել էլին ու դեմքն ել բարի թվաց Լուիզային, տարան նրան առաջվա տեղը:

Ժակլինայի հայրիկի նամակը հարում ու ցավեցնում եր Լուիզայի վտար, բայց նա բոլորովին չեր թվացնում, թե աջ վտար ցավում ե, ճնամակը կարելի չե միմիայն հայրիկին կամ ընկեր ժանին տալ: Ինչեց Լուիզան պարոն Եղմոնի պատվերը:

Տեղ հասան:

Ակավեց հարց ու փորձը: Լուիզան վոչինչ չի հիշում. նա մինչև անգամ չի յեկ կարող ախտեղից վերադառնալ հայրիկի մոտ:

— Յիթե ինձ տանեք Ժակլինայի հայրիկի մոտ, ախտեղից կարող եմ գնամ քաղաք, կամ յեթե տանեք հայրիկի կամ ընկեր ժանի մոտ, ախտեղից կարող եմ պարոն Եղմոնի մոտ գնամ, իսկ այստեղից — չեմ կարող, — ասում ե Լուիզան:

Մեծ քթանին ուզում ե ծեծի «համառ աղջկանը», բայց ճերմակ մազեր ունեցողը թուլ չի տալիս

— Պետք ե մորթել,— գոռում ե մեծ քթանին կատաղած:

— Լսի՛ր, փոքրիկս,— դարձավ Լուիզային սպիտակ մազեր ունեցող, բարի դեմքով մարդը,— դու զուր տեղը սուտ մի խոսի. միևնույն ե, քեզ համար վատ կլինի. աբի, ցույց տուր պարոն Եղմոնի տեղը, թե չե Գալիֆեն քեզ չի թողնի վողջ-առողջ տուն վերադառնալ:

— Քեռի,— սրտապնդելով ասում ե Լուիզան,— յես ամեն բան ուղիղ եմ ասում. ճանապարհը չգիտեմ. տաբեք ինձ հայրիկի մոտ, ցույց տվեք, թե ինչպես գնամ, Գալիֆեն շատ վասն ե. նա ծեծում ե յերեսխաներին, դուք ամենքդ Գալիֆե յեք...

Զինվորներն ակամա ծիծաղեցին:

— Դե, ասա, ինչպես կարելի չե ձեռք տալ այս անմեղ յերեսխալին,— ասաց սպիտակ մազեր ունեցողը կո-

պիտ դեմքով ու մեծ քիթ ունեցող մարդուն: — Չե վոր տանը մինք ել ունենք սրա պես յերեսխաներ. կոմմունարները կոտորեն... լավ կլինի... ինչ եք կարծում... յեկեք թողնենք. վոր կողմ ուզում ե, թող գնա՝ ձեռներս անմեղ արլան մեջ չշաղախենք...

— Իսկ ինչ կանի մեզ Գալիֆեն,— հարց ե տալիս մեծ քթանին:

— Նրան կասենք, թե արել ենք, ինչ վոր պետք եր: Նա հո բանը-գործը կտրած սրա յետևից չի. միևնույն ե, այսոր վաղը կոմմունան ընկնելու յե...

— Չե, յեկեք շորերը հանենք,— պնդում ե մեծ քթանին.— կտանենք իբրև նշան:

— Ահա վերցրին Լուիզայի կարմիր գլխարկը. ուզում են կոշիկներն ել հանեն:

— Առանց կոշիկի ման գալ չեմ կարող, քեռի,— աղաչում ե Լուիզան ճերմակ մազեր ունեցողին,— կոշիկներս թողեք մնան...

Ու մի սարսափելի միտք ե հանկարծ տանջում նրան. «Իսկ յեթե նամակը գտնեն... ով դիտե, ինչ ե գրել Ժակլինայի հայրիկը»...

Ճերմակ մազեր ունեցող մարդը հազիվ համոզեց մեծ քթանուն, վոր կոշիկները չհանեն:

— Այժմ կարող ես գնալ,— ասում ե մեծ քթանին:

— Քեռի,— խնդրում ե Լուիզան,— ցույց տուր բաղաբի ճանապարհը...

— Ձանդ, շան լակոտ՝, գոռում ե մեծ քթանին. Քաղաքի ճանապարհը չե, խոզի ձագ, ասա տանենք մորդ ծոցը դնենք, ելի...

Ճերմակ մազերավորը մի կողմ ե քաշում Լուիզային, ասելով:

Այսպիս... մատիս կողմը նայիր... ուղիղ այսպես կգնաս, կհասնես մի բլուրի. կծովես քիչ դեպի աջ և ուղիղ առաջ կերթաս...

Ճերմակ մազեր ունեցող մարդը լաց ե լինում. նա մինչև անգամ համբուրեց Լուիզայի գանգուրները և ա-



սաց- «իմ թանգադին ժորժետտա»,
ու շտապով հեռացավ:

«Ինչ բարի մարդ ե... մտածում ե
Լուիզան,- հենց դիտե, թե ահուհու
ժորժետտա լե... ինչ լաճն ե, իսկի Գա-

լիֆե չե. հայրիկի ու ընկեր ժանին կպատմեմ նրա մա-
սին», - վճռում ե իր մեջ Լուիզան...

* *

Արևն արդեն մայր մտնելու վրա լեր, լերք Լուիզան
հասավ բլրին. հիշեց. դա առաջին բլուրն ե, ուրախացավ.
պետք ե ծովել դեպի աջ: Ծովեց ու վազում ե գլխաբաց,
զանգուրները քամուհն տալով: Ահա, քիչ ե մնացել, շու-
տով կհասնի, մտածում ե Լուիզան և քայլերն արագաց-
նում:

Հանկարծ լսվեց թնդանոթների վորոտ: Լուիզային
թվաց, թե ամպը պայթեց: Կարող ե անձրև գալ: Վազում
ե. Բայց թնդանոթների ձայներին հետևեցին հրացանների
կրակոցները, Լուիզայի առջևի ու լեռների կողմից:

Վազում ե Լուիզան շնչասպառ: Հեռում ե նրա փոք-
րիկ սիրտը թփրտում ե ծ
տի թևերի պես, կարծես ու-
զում ե դուրս պրծնել բերա-
նից:

Հրացաններն ավելի ուժեղ
են վորոտում իսկ Լուիզա-
յի գլխի վրայով ինչ վոր բա-
ներ են վզգում, կարծես ճան-
ճեր էնեն. լերեմն ել սու-
լում են, փողոցային լերե
խաների 'սման սուր սուլո-
ցով:

Մութն ընկնում ե Լուի-
զան քիչ վախեցավ, բայց



վազում ե անընդհատ: Հեռվում կարծես մի սպիտակ
տուն ե տեսնում. ալ, ետեղ են հայրիկն ու ընկեր ժա-
նը, մտածում ե նա, իրեն են սպասում: Կանչում ե.

— Հայրիկ... ընկեր ժան... գալիս եմ, գալիս եմ...?

Նրան թվում ե, թե հրացանները դադարեցին առջևի
կողմից կրակելուց, բայց լեռների կողմից ավելի ուժեղ ե
լավում վորոտը:

— Գալիս եմ, հայրիկ, գա...ն...

Ինչ-վոր մեկը կարծես բռնեցրով ամուր խփեց նրա
մեջքին: Լուիզան ընկավ, բայց նորից վորոքի լեռով. վա-
զում ե:

— Հայրիկ... ընկեր ժան... գալիս եմ, գալիս...

Բայց վորոտները թուլանում են. ձայնն ել զիլ չի հըն-
չում... Լուիզան ել առաջվա պես չի կարողանում վազի...
նրա գլուխը ծանրացել ե, քունը տանում ե...

Լուիզան քիչ ել առաջ շարժվեց ու ընկավ:

Նրան թվաց, թե քայլերի ձայն լսեց, ծիշտ ե. մեկը
մոտեցավ, կռացավ ու ձեռք տվեց մազերին:

— Լուիզա, սարսափած ձայն տվեց մոտեցողը:

Լուիզան ճանաչեց ձայնը. Ընկեր ժանն ե:

Լուիզան հաղիվ աչքերը բաց արեց.

Ընկեր ժան... քունն տանում ե... նամակն ալա-
տեղ ե... (Ուզում ե բարձրացնի աջ վորտը, չի կարողա-
նում) Ժակլինային կասեք, վոր տեսա նրա հայ... հայ...
ը... ըրիկ...

Լուիզան չկարողացավ խոսքը վերջացնի:



<< Ազգային գրադարան



NL0402012

8201

ԳԻՆ 60 ԿՈՊ.

М. ДАРБИНЯН
МАЛЕНЬКИЙ КОММУНАР
АРМЕНИЗ ЭРИВАНЬ 1931 Г.

ՊԵՏՐԱՏ ԿԻՆՈ ԳՐԱՌ. N 6242 (F)
ՏԻՐԱԾ 4000 ՀԻՄ. ՊԵՏՐԱՏԻ ՊԱՏԿ. N 2255